ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/258

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.10.2021թ. թիվ 26/26-1/16533-2021 գրությամբ «Հրաշք այգի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության 04.10.2021թ. թիվ 09/14515-2021 գրության հիման վրա, 26.08.2021թ. թիվ 26/26-1/13703-2021 գրությամբ նախաձեռնել է «Հրաշք այգի» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Հրաշք այգի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հրաշք այգի» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից գրություն է ներկայացվել ՀՀ Գյուղատնտեսության նախարարության և «ՀՐԱՇՔ ԱՅԳԻ» ՍՊ ընկերության միջև 2018 թվականի նոյեմբերի 19-ին կնքված Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/37-ԲԲՊՎ-56» պայմանագրով պարտավորությունները չկատարելու՝ ապրանքները չմատակարարելու հիմքով «ՀՐԱՇՔ ԱՅԳԻ» ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով:

Նախ ցանկանում եմ նշել, որ ապրանքների չմատակարարման պատճառ է հանդիսացել Պատվիրատու կողմից ապրանքի քանակի ոչ ճիշտ նշումը մասնավորապես քանի որ թիվ «ՀՀ ԳՆ- ԳՀԱՊՁԲ-18/37-ԲԲՊՎ-56» պայմանագրի N 1 հավելվածի չափման միավոր մասում նշված է լիտր կամ կգ և ընդհանուր քանակ սյունակում նշված է 4142, սակայն պահանջվող նյութը ունի կիլոգրամով և լիտրով տարբեր քաշեր, ուստի չափման միավոր մասում լիտր կամ կգ նշումը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին՝ Գնման առարկայի չափման միավորը հստակ ներկայացված չէ, ըստ պայմանագրի N 1 հավելվածում նշված արտադրողի բրոդիֆակում 2.5 ազդող նյութով պեստիցիդի 4500 լիտրը կազմում է 4950 կիլոգրամ, հետևաբար միևնույն նյութի լիտրը, որը հանդիանում է նաև նյութի ծավալի բնութագրիչ ավելի ծանր է կշռում կիլոգրամով և չէր կարող Պայմանագրում ապրանքի տարբեր քանակ ունեցող նյութը հավասար քանակի նշվել, որը հանգեցնում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 481-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հետևանքներին, այն է. «Եթե առուվաճառքի պայմանագիրը հնարավորություն չի ընձեռում որոշել հանձնման ենթակա ապրանքի քանակը, պայմանագիրը համարվում է չկնքված»:

Ինչ վերաբերվում է «ՀՐԱՇՔ ԱՅԳԻ» ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն, այն իրավազուրկ է, քանի որ Ընկերության կողմից վերոնշյալ փաստական և իրավական հիմքով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանում վիճարկվում է թիվ «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/37-ԲԲՊՎ-56» պայմանագիրը /քաղաքացիական գործ թիվ ԵԴ/45355/02/21/:

Բացի այդ թիվ ԵԴ/27617/02/18 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 2021 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման գնումների կազմակերպման կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Այսինքն 2021 թվականի օգոստոսի 25-ի դրությամբ արդեն իսկ ծագած է եղել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքը, սակայն տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից գրությունը ուղարկվել է 04.10.2021թ.-ին խախտվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման հավելված N1 գնումների կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջը՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուի տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր լիազորված մարմին ուղարկելու պարտավորությունը, որի հիմքով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից գրությունը ենթակա է մերժման:

Վերոնշյալ փաստական և իրավական հիմքերով գրության մերժմանը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անդրադարձել է իր 05.02.2021 թվականի ՍՑ-ՆԳ-2021/20 որոշումում:

Հիմք ընդունելով վերոնշյալը խնդրում եմ մերժել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից 04.10.2021թ.-ի գրությամբ «ՀՐԱՇՔ ԱՅԳԻ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նախաձեռնված ընթացակարգը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/258 ընթացակարգի շրջանակներում 14.10.2021թ. ժամը 09:40-ին և 19.10.2021թ. 09:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.10.2021թ. թիվ 09/14515-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետև՝ Նախարարություն) և «Հրաշք այգի» ՍՊԸ-ի (այսուհետև՝ Վաճառող) միջև 19.11.2018թ. կնքված ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/37-ԲԲՊՎ-56 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը պետք է մատակարարեր Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքները:

Վաճառողը չի կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունը և ապրանքը չի մատակարարել:

Վաճառողի կողմից վերը նշված պայմանագրային պարտավորությունները չկատարելու հիմքով Նախարարությունը 2021թ սեպտեմբերի 27-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել է:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողի կողմից հայց է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ ԵԴ/27617/02/18 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ հայցն ընդունվել է վարույթ: Դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ՝ Վաճառողի միջնորդությամբ Գնորդի նկատմամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց, մասնավորապես՝ արգելվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը միակողմանի լուծել ՀՀ Գյուղատնտեսության նախարարության և «Հրաշք այգի» ՍՊԸ-ի միջև 19.11.2018 կնքված Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/37-ԲԲՊՎ-56» պայմանագիրը, մինչև քաղաքացիական գործով վերջնական դատական ակտի ուժի մեջ մտնելը:

Դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 15-ի որոշմամբ հայցը թողնվել է առանց քննության, որը բողոքարկվել է Վաճառողի կողմից: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2021 թվականի ապրիլի 8-ի որոշմամբ՝ վերաքննիչ բողոքը մերժվել է ամբողջությամբ՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ:

Վաճառողի կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել: Վճռաբեկ դատարանի 2021 թվականի օգոստոսի 25-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2019 թվականի մայիսի 8-ի ՀՕ-31-Ն

օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն ու ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը միաձուլման ձևով վերակազմակերպվել են՝ ստեղծելով ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Կից ներկայացվում է անհրաժեշտ տեղեկատվությունը հիշյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/258 ընթացակարգի շրջանակներում 14.10.2021թ. ժամը 09:40-ին և 19.10.2021թ. 09:25-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/258 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/258 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ գյուղատնտեսության և «Հրաշք այգի» ՍՊԸ-ի միջև 19.11.2018թ. կնքվել է թիվ «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/37-ԲԲՊՎ-56» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 4142 լիտր (կամ կգ) «Մկնասպան միջոց 0.25% բրոդիֆակում ազդող նյութով Ռոդիֆակում» ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 21-րդ օրը:

3. Պատվիրատուն «Հրաշք այգի» ՍՊԸ-ին ուղղված 28.09.2021թ. թիվ 09/14276-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով ծանուցում ենք, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Հրաշք այգի ՍՊԸ-ի միջև 19.11.2018թ. կնքված «ՀՀ-ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/37-ԲԲՊՎ-56» ծածկագրով գնման

պայմանագրի շրջանակներում Վաճառողը պետք է մատակարարեր Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքները:

Վաճառողը չի կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունը և ապրանքը չի մատակարարել:

Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունը չկատարելու հիմքով նախարարությունը Պայմանագրի 2.1.7 և 8.9 կետերի հիման վրա 2021թ. սեպտեմբերի 27-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել է:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողի կողմից պետք է գանձվի պայմանագրի կատարման ապահովումը 2 568 040 ՀՀ դրամի չափով:

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2019 թվականի մայիսի 8-ի ՀՕ-31-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն ու ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը միաձուլման ձևով վերակազմակերպվել են՝ ստեղծելով ՀՀ էկոնոմիկայի նախարարություն»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 28.09.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.10.2021թ. թիվ 26/26-1/16533-2021 գրությունը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության 04.10.2021թ. թիվ 09/14515-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Հրաշք այգի» ՍՊԸ-ի միջև 19.11.2018թ. կնքվել է թիվ «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/37-ԲԲՊՎ-56» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի

N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 4142 լիտր (կամ կգ) «Մկնասպան միջոց 0.25% բրոդիֆակում ազդող նյութով Ռոդիֆակում» ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 21-րդ օրը:

Պատվիրատուն «Հրաշք այգի» ՍՊԸ-ին ուղղված 28.09.2021թ. թիվ 09/14276-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով ծանուցում ենք, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Հրաշք այգի ՍՊԸ-ի միջև 19.11.2018թ. կնքված «ՀՀ-ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/37-ԲԲՊՎ-56» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը պետք է մատակարարեր Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքները:

Վաճառողը չի կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունը և ապրանքը չի մատակարարել:

Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունը չկատարելու հիմքով նախարարությունը Պայմանագրի 2.1.7 և 8.9 կետերի հիման վրա 2021թ. սեպտեմբերի 27-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել է:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողի կողմից պետք է գանձվի պայմանագրի կատարման ապահովումը 2 568 040 ՀՀ դրամի չափով:

Համաձայն «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2019 թվականի մայիսի 8-ի ՀՕ-31-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունն ու ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը միաձուլման ձևով վերակազմակերպվել են՝ ստեղծելով ՀՀ էկոնոմիկայի նախարարություն»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 28.09.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

Պայմանագրի 6.6-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ ուսումնասիրելով վերը նշված փաստերը՝ արձանագրում եմ, որ «Հրաշք այգի» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջև 19.11.2018թ. կնքված թիվ «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/37-ԲԲՊՎ-56» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Հրաշք այգի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից վկայակոչված հետևյալ դիտարկմանը. «*Պայմանագրի N 1 հավելվածում նշված արտադրողի բրոդիֆակում 2.5 ազդող նյութով պեստիցիդի 4500 լիտրը կազմում է 4950 կիլոգրամ, հետևաբար միևնույն նյութի լիտրը, որը հանդիսանում է նաև նյութի ծավալի բնութագրիչ ավելի ծանր է կշռում կիլոգրամով և չէր կարող Պայմանագրում ապրանքի տարբեր քանակ ունեցող նյութը հավասար քանակի նշվել, որը հանգեցնում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 481-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հետևանքներին այն է՝ «Եթե առուվաճառքի պայմանագիրը հնարավորություն չի ընձեռում որոշել հանձնման ենթակա ապրանքի քանակը, պայմանագիրը համարվում է չկնքված»»,* ապա սույն մասով *գտնում եմ, որ նման դիտարկումն անհիմն է հետևյալ հիմնավորմամբ.*

Գտնում եմ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 481-րդ հոդվածի 2-րդ մասը վերաբերելի չէ սույն դեպքին, քանի որ Պայմանագրին կից հավելված N 1-ով՝

Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով հստակ սահմանվել է մատակարարման ենթակա քանակ, այն է՝ 4142, ինչպես նաև՝ չափման միավոր՝ լիտր (կամ կգ):

Ինչ վերաբերում է չափման միավորը՝ լիտր (կամ կգ) նշված լինելուն, ապա արձանագրում եմ, որ արդեն իսկ կնքված պայմանագրի պայմաններում, որում ամրագրվել են կողմերի իրավունքներն ու պարտականություններն, ինչպես նաև Կողմերի միջև պահանջվող ձևով համաձայնություն է ձեռք բերվել նաև պայմանագրի էական պայման հանդիսացող չափման միավորի մասով, Ընկերությունը կարող էր տվյալ դեպքում նշված քանակը մատակարարել թվարկված չափման միավորներից որևէ մեկով, մինչդեռ արձանագրում եմ, որ Ընկերությունը մատակարարում չի իրականացրել՝ խախտելով պայմանագրով ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ինչ վերաբերում է Ընկերության այն դիտարկմանը, որ *Պատվիրատուի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը, քանի որ 2021 թվականի օգոստոսի 25-ի դրությամբ՝ երբ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է, արդեն իսկ ծագած է եղել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքը, սակայն Պատվիրատուի կողմից գրությունը ուղարկվել է 04.10.2021թ.*, ապա արձանագրում եմ, որ նման դիտարկումն անհիմն է հետևյալ հիմնավորմամբ.

Այսպիսով՝ Պայմանագրի 8-րդ կետի 8.9-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը***: <u>Վաճառողը</u> պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ <u>համարվում է պատշաճ ծանուցված</u>՝ <u>ծանուցումը</u>, սույն կետով սահմանված <u>հրապարակվելուն հաջորդող օրվանից</u>:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ

մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Անդրադառնալով Կարգի 45-րդ կետով և 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված ընթացակարգային ժամկետի հոսքի սկիզբը ճիշտ հաշվարկելու իրավաստեղծ մարմնի նպատակին՝ հարկ է արձանագրել, որ այն չի կարող ինքնանպատակ լինել, քանզի ցանկացած տնտեսավարող սուբյեկտ, ում հետ կնքված պայմանագրի լուծման հետևանքով պայմանագրի մյուս կողմը հիմքերը կարող է ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու համար, ունի լեգիտիմ ակնկալիք առ այն, որ այդպիսի գործընթաց չի նախաձեռնվի իր նկատմամբ այնքան ժամանակ, քանի դեռ ինքը պատշաճ չի ծանուցվել պայմանագրի միակողմանի լուծման մասին:

Վերը շարադրված փաստերով պայմանավորված՝ արձանագրում եմ, որ «Հրաշք այգի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքն ի հայտ է եկել Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից, երբ Պայմանագիրը կնքած անձը համարվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված, այսինքն՝ 29.09.2021թ.-ից:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին է ներկայացրել 04.10.2021թ., որպիսի պայմաններում գտնում եմ, որ Պատվիրատուի կողմից պահպանվել է Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.10.2021թ. թիվ 26/26-1/16533-2021 գրությամբ «Հրաշք այգի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Հրաշք այգի» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**